

# ՅԱԻԵԼՈՒՄԾ ,՝ԱՐԱՐԱՏԻ՛՝ 1904 թ. ԱՊՐԻԼ

Թ. ՈՒ Դ. Թ.

ՍԻՄԵՕՆԻ ՍՍՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ա. Ո.

ՓԻԼԻՊՊՈՍ ԷԶՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ \*

Առ ի յերկնուստ պատռեալ և ի գերագոյէ բարդաւաճեալ, հոչակելի և հաստահեղ մենաստանէս ի հըրբեշտակաբնակ խորանացս երկնանման յօրինմամբ գերահաշակ ուխտիցս, գմբեթաշէն և սագաշէն սուրբ 5 եկեղեցեացս տանս կիլիկիոյ, այսինքն Սոայ սուրբ էջմիածնայ և սուրբ Սոփիտ և սուրբ Աստուածածնի և սուրբ Լուսաւորչի Աջոյն և այլ սուրբ աջերացն, որք աստանօր կան հաւաքեալք: Եւ ի սոցին սպասաւորէ նուստ 8էր Սիմէօն կաթուղիկոսէ և պատրիարքէ որբաց աթոռոյն Երուսաղէմայ: Առ հոգեսր եղբայրդ մեր 40 8էր Փիլիպպոս կաթուղիկոս Հայոց:

Գիտութիւն լիցի քեզ, որ գրեալ էիր ընդհանրական քարտէզ և նամակ հանդերձ տեառնառաք ողջունիւ և նոյնաւանդ սիրով առ ամենայն արմենակոչ

Ա. Ե. Թ. 34<sup>թ</sup>: \* Պաշտամութիւն իրաւանց սրբոյ աթոռոյ տանն կիլիկիոյ Թուղթ Տեառն Սիմէօնի ամենայն Հայոց կաթուղիկոսի տանն կիլիկիոյ, պատասխանի թղթոյն՝ զոր առաքեաց Փիլիպպոս կաթուղիկոսն Վաղարշապտուու:

1. գերագոյն էէն: 2. քարոզելի և մենաստանէս: 3. յօրինեալ: 4. սրբոց: 5. տանն: չիք այսինքն: 6. սրբոյ: 6. էջմիածնի, որբոյն Սոփիայ, սրբուհւոյ Աստուածածնին: 7. սրբոյ Լուսա: 8. աստկան հաւաքեալ: 9. չիք նուստաստ: ամենայն Հայոց և պատ: 10. Երուսաղէմին: 11. ամենայն Հայոց: 12. զոր: 13. քարտէս:

- 45 խուման, որ յաշխարհս կիլիկիայ, ի Սիս և ի Բերիոյ քաղաքին գերագահ և ընդհանուր սեփականեալ աթոռոյն Սոյ, և միասւստր բնաւից զաւակաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, վարդապետաց, եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, սրբոց հարց և լի:
- 20 Նախ դրեալ ես թէ, «յուշ լիցի ձեզ, ով հետեւ ողջ առաքելոցն» և լին, բերելով վկայութիւն ի Սովորունէ՝ եթէ «Քանզի հզօր է քան զմահ սէր, և խիստ իբրև զդժոխս՝ նախանձ» (Երդ երգոց Բ. 6): Այս, ճշմարտութեամբ ասես զայս, բայց զի՞նչ է կարգ սիրոյ, այսինքն 25 երկու են, նախ խնդրելով զփոխարէնն զափրելն, իբրև զդժոխս՝ նախանձ, այս ճշմարտութեամբ ասես և այս պակաս է, զի որ խնդրէ, պակաս առնէ զխնդրելին: Իսկ երկրորդ սէրն առանց խնդրելոյ սիրեն և այս գերագրական է, զի Աստուծոյ նմանի, սրպէս առաքեալն ասէ: «զի ոչ 50 մեք սիրեցաք զնա, այլ զի նա սիրեաց զմեզ» (Ա. Յով. Դ. 10): Եւ մտերիմ սէրն այն է, որ գործով խնամէ և մտօք սիրէ, իսկ խնամելն՝ իբր թէ ողոքանօք խօսի խօնարհութեամբ, զի գոն այնպիսի բանք, ոչ ողոքանօք, այլ խրացացանեն զմարդն: Բայց տեսանեմ ի սոցանէ ի քեզ և 55 ոչ զմին: զի հեռի են այս ամենայն ի քէն, զի միայն լեզու առջորես ի սիրոյ և ոսկերք քո վասն առաւել նախանձու մշտակէզ առնեն զքեզ: Զի առացեալ ես: «Հուր սիրոյ ձերոյ տոչորեալ մշտակէզ առնէ զսոկերս իմ յարաժամ մղձկմամբ սրտիս, որ ոչ բաւի և պատմի:
15. Չիք և ի Բերիոյ: 16. Չիք քաղաքին: գերագահիս ընդհանրաբար համայն:
- Թող. 35<sup>ա</sup>: 16. սեղչականեալ և մասնավիճակիալ լամճնի աթոռոյն: 17. Չիք և միագումար բնաւից: 19. և աշլ սրբոց հալց: 21. Սաղմոնէ: 22. թէ հզօր քան զմահ սէր: 24. Չիք այսինքն: 25. կրկին, նախաւ չիք զփոխարէնն: 26. նախանձ խիստ է: Չիք ասես: 27. զի ամենայն որւառնու քան: 27—8 իսկ երկրորդն: 28. վերագրական է: 29. Չիք զի Աստուծոյ նմանի: ասէ առաքեալն, ոչ զի: 30 նախ նա: 32. իբրու թէ: 33. որք ողոքանօք են, սակայն խրացանեն: 35 ոչ մի, զի հեռի է: 36. լեզուաւ առջորիս: 37. Չիք Զիք: 38. թէ հուր: 39. փղձկմամբ սրտիւ:

40 քարտիզիւ և տօմսիւ, միայն առ Աստուած յայտնի է զայս: Ահա բանիւքո զքեզ ստես, ոչ ի քեզ սիրոյ հուր կայ և ոչ տոշորումն և ոչ մշտակէզ ոսկերացդ այրումն և ոչ միշտ մզձկիս սրտիւդ, վասն զի սէրն ի սրտէ ստիպէ զունողն: և զի քո սէրդ ոչ ի սրտէ է և ոչ հոգեսոր և մարմնաւոր:

45 Եւ եղեալ ես կրկնաբանութեամբ, եթէ վասն զի հզօր ասացաք զունելութիւն գթոյ և սիրոյ մերոյ, զոր չիք նմանութիւն սորին յայլ մարմնաւոր իրա: Զի՞նչ է քո դութն, և զի՞նչ քո սէրն առ սոսա, զի սէրն նախ՝ տես սութեամբ է զմիմեանս, երկլորդ՝ խօսակցութեամբ:

50 Երբորդ՝ երթեեկութեամբ, չորրորդ՝ պատգամաւ և նամակաւ, հինգերորդ՝ միջնորդօք: Ահա ի սոցանէ միթէ գտանի՞ ի քեզ, զի զոսա ոչ ես տեսեալ, և ոչ ընդ սոսա խօսակցեալ և ոչ ի սոսա երթեեկութեամբ ընթացեալ և ոչ պատգամս և նամակս ուզարկեալ և ոչ միջնորդօք յորդորեալ վասն սիրոյ և գթոյ, և ոչ երբէք նամակս առ մեզ եկեալ:

Ապա ուր երեխ քան զմահ հզօր սէր և գութ քո, և ոչ երբէք, այլ շողոքորդել է ողոքելն քո և ոչ սէր և գութ: Զի եթէ սէր գոյր ի քեզ և գութ առ մեզ կամ ի վերայ մեր ժողովրդեան, սիրոյ նամակաւ և քաղցր բանիւք յորդորական սէր առաքէիլ առ մեզ: Քանզի գեռ ևս զքո համբաւն ոչ եմ լուեալ և ոչ զքեզ տեսեալ և ոչ յորդորական նամակ քո առ մեզ եկեալ:

**Թ.դ:** 35<sup>ր</sup>: 40. քարտիսիւ: 41. այսու դու զքեզ ստես զի ոչ: 42. յոսկերսդ մշտակէզ այրումն: 43. փղձկիս սրտիւ: ի սրտէն: զունողն: իսկ: 44. չիք զի: 45. Եւ երկրորդեալ ես: թէ քան զմահ հզօր: 46. սիրոյ և գթոյ, զոր 48. զի՞նչ է քո սէրդ: 49. միմեանց է: 51. Արդ՝ ասա ուրիմն որն ի սոցանէ: 52. տեսեալ երբէք, 53. առ սոսա երթեեկութեամբ: 54. պատգամաւ և նամակաւ ընդ սոսա սէր արարեալ և ոչ: 56. նամակ քո: 57. չիք հզօր: 58. ոչ երբէք: 59. կամ գութ: դէպ առ մեզ: 60. ժողովրդեանն մերում, նա սիրոյ: 61. բանիւ զթուղթ

**Թ.դ:** 36<sup>ա</sup>: 61. սիրայորդոք առաքէիլ: 62. Արդ, տակաւին:

Բայց աեսանեմ՝ զքեզ վառեալ և բորբոքեալ իրեւ  
 65 զգեհեան հրոյ, որ այրէ և տոչորէ զամենայն նիւթ  
 իրեւ զհուր նախանձ քո։ Տեսանեմ՝ զքո յօժարու-  
 թիւն՝ որ գայ առ ի սպանանել և կործանել զարե-  
 մուեանս 1), բայց ոչ ես ձեռնհաս. զի «Եթէ Աստուած-  
 ի մեր կոյս է, ով է ի ձէնջ մեղ հակառակ» (Հոռմ. Ը. 31).  
 70 զի «Ճէր ամբարտաւանից հակառակ է, տայ շնորհս խո-  
 նարհաց» (Առակ. Գ. 34):

Դարձեալ զքեալ ես թէ, դէտ դոլով զփրկութիւն  
 հողալ պարտիմք զհօտին Քրիստոսի ըստ առաքելոյն։  
 «Քանզի յունաց և բարբարոսաց պարտապան եմ» (Հոռմ.  
 75 Ա. 14) են։ Այս, ճշմարտութեամբ է ասացեալ քդ, որպէս  
 որ քարոզեցիք յերկիրս Լեհաց, և մինչև ցայսօր հրատա-  
 րակի ընդ ամենայն տպդո 2), իսկ զայն, որ ի վերոյ գը-  
 րեալ ես, թէ «օրհնութիւն ընդհանրական» և զքո ու-  
 նայն սէրն երեեցուցանես. որ ցուցանելով զասցեալդ՝  
 80 ասացեալ ես. «Երկնչիմ յումանց դիւրասայթաքաց»։ Ո՞վ է  
 դիւրասայթաքն, զի դու զքեզ դու սայթաքես և ընդդի-  
 մադիր լինիս դու քեզ, և օրինակ բերես առածնեսայեայ.  
 «որք յարեն զտուն ի տուն և զագարակ առ ագարակ  
 մերձեցուցանեն» (Եսայի Ե. 8)։ Զոր տուն յարեցաք կամ  
 85 զոր ագարակ մերձեցուցաք առ ագարակ։ Աւազ յիմա-  
 րութեանու Դուք ընդէր զԱղուանից տունն յափշտա-  
 կեցիք, զոր ի ձեր թուղթն դրեալ էիք, թէ ինքն զը-

դհամբաւ քո չեմք լուեալ։ 64. միայն աեսանեմք։ 66. քանզի իրեւ  
 զհուր է։ 66—7. ոյժարութիւն քո, որ կամիս սպանանել և կորուսա-  
 նել զարեւ։ 68. զի եթէ Տէր։ 70. հակառակ կայ։ 72. գոլով մեր 73 հօ-  
 տին։ առաքելոյ։ 74. բարբարոսաց իմաստնոց և անմտից։ չիք  
 պարտապան։ 75. ասացեալդ։ 76. քարոզեցեր յերկիրն։ 78. չիք հ։  
 79. սէրդ երեեցուցեր՝ ոչ ցուց։ 80. Ասացեալ ես։ 81. կու սայթա-  
 քես։ 82. չիք դու։ Վասն զի օրինակ առքերես յնսայեայ։ 83. տուն  
 առ տուն։

Թաղ. 36։ 84. չիք մերձեցուցանեն։ 84—5. Արդ, զոր տուն յարե-  
 ցաք առ տուն, և զոր ագարակ։ 87. զոր դուք ի ձեր թղթոջ։ թէ ինք-

լուիս աթոռ է ի սուրբ Լուսաւորչէն կարգեալ։ Նոյնպէս և  
զԱղթամարայն ընդ ձեր իշխանութեամբ նուաճեցիք,  
90 որ եձի՞Զ տարի է, որ ինքնագլուխ կաթուղիկոսք են։ Յ) թէպէտ գիրք կու պարսաւեն։ Տես, Բո եղայ յարող  
տուն առ տուն՝ թէ գու ռուտելով զտունս այրեաց, պատ-  
ճառանօք երկարեալ զազօթս, զի առաւել դատաստան  
ընդունիցին» (Մարկ. Ժ. 40):

95 Դարձեալ գրեալ ես թէ, «իւրաքանչիւր յոր կոչումն  
կոչեցաւ, ի նմին կացցէ (Ա. Կորնթ. Ե. 20), և իւրաքանչիւր  
զիւր բեռն բառնալոց է»: Եւ գիտես՝ թէ իւրաքանչիւր  
զիւր բեռն բառնալոց է, իսկ ընդէր գու զայլ վիճակներն  
և զայլոց տունն յափշտակեցեր ըստ վերոգրելոցն թէ,  
400 «Աղուանիք» և ին։ Դարձեալ գրեալ ես, «Եւ զի, թէ իցէ  
առագրել օրինակս, ոչ իսկ գոյ ոք, որ պատասխա-  
նատրիցէ։ Քանզի անհատն և տեսակն ի սեռն տե-  
սանի, այլ ոչ սեռն և տեսակն ի յանհատն պարու-  
նակի։ Վասն զի ամենայն տեսակ և անհատ՝ կենդանի-  
405 են, բայց ոչ ամենայն կենդանին մարդ է. որպէս մա-  
սունիքն ի հանուրն տեսանին, բայց ոչ հանուրն ի մասունա»։

Այս բանս բազում տեսութիւնս ունի. սակայն  
զայս բանս այն մտօքն էք դրեալ, թէ մեք յառաջ եմք  
և դուք վերջին, կամ՝ թէ մեք դլուխ՝ և դուք մա-  
սունք։ Եւ ասացեալ ես թէ. ու կարէ առագրել սմա-  
պատասխանի. իբրև թէ զբոցըն մեր է։

Այս, այդպէս էր. վասն զի էր երբեմն, զի առաջին կաթուղիկոսութիւնն ի սրբոյն Գրիգորէ Լուսա-

նազլուխ: 88. աթոռէ և թէ սուրբ Խուսաւորիչնէ: 91. Վերք պարագ-  
ւեն: Արդ, ես եղէ: 93. երկարելու զի աւելի: 97. Արդ՝ եթէ դիտես-  
որ: 98. չի՛ իսկ: ուրեմն գու զայլոց վիճակըն: 100. զԱզուանս և թէ  
զայլսն: չի՛ Գարձեալ: Գրեալ ես, զի եթէ իցէ: 101. առադրելի:  
102. նոտրեացէ: 103. և տեսակն յանհատն: 105. այսինքն մասունքն:  
Թող. 37<sup>ա</sup>: 106. եռչ: 107—8. Այն, և այս բանս: տեսութիւն ունի,  
զի դուք այնու մասք զրեցեալ էք զայս, թէ մենք առաջինք: 109. վեր-  
ջինք: զլուխն, դուք՝ մասունք: 110. զի տսելու թէ: 111. է այնպէս տսել-  
որպէս թէ զրոյցն ի մեղ է: 112. այդ այդպէս էք երբեմն, զասն զի-

## ԾԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հնումն Մեծ Հայաստանը կոչւում էր Արելեան Հայք, իսկ Փոքր Հայքը՝ Արևմտեան, որոնք բաժանուում էին իրարից Նվիրատ գետով, Գ. դարում, երբ Հայաստանը բաժանուեց Յունաց և Պարսից մէջ, Յունաց բաժինը կոչւում էր Արեմուտք, իսկ Պարսիցը՝ Արելեքը։ Այս տեսակ բաժանումն յայտնի է Խորենացուն էլ (Գիրք Գ. գլ. ՇԲ). «Վասն որոյ թողու (Սահակ) զՄեսրոպ ի վերայ վարդապետութեան կողմանն արեւմտից . . . Եւ ինքն եկեալ անցանէ յայրարատեան գաւառ»։ ԺԲ. դարում, երբ Կիլիկիան Հայոց քաղաքական և կրօնական կենդրոն դարձաւ թագաւորական և Հայրապետական աթոռների այնտեղ հաստատուելով՝ կիլիկիցիք իրանց անուանում էին Արեմուտեանք, իսկ ըուն Հայաստանցիներին՝ Արելելեանք։ Այնուհետև մինչև ցայսօր Տաճկաց իշխանութեան տակ եղող Հայոց գաղթավայրերը կոչուել սկսեցին Արեմուտեան, իսկ Մուսաց և Պարսից իշխանութեան տակ եղողները՝ Արելելեան։ Այժմ Արելելեան և Արեմուտեան յորջորջումները միայն զրական բարբառների վերաբերութեամբ են գործ ուծւում — Արելելեան կամ Արագատեան բարբառ և Արեմուտեան կամ Տաճկահայոց բարբառ։

2. Ակնարկութիւնը Լեհաստանի հայերի կրօնավորիութեան մասին է։

ԺԷ. դարի առաջին քառորդին Շահ-Արաս Մեծ՝ աւելելով Արարատեան աշխարհը և հայերին գաղթեցնելով դէպի Սպահան՝ ու Էջմիածինը աւերակ էր գարձրել Դաւիթ Ե. մենակ չկարողանալով հոգալ ծանր հարկապահանջութեան և պարագերի տակ ընկած էջմիածնի պէտքերը, իրան աթոռակից կաթուղիկոս օծեց Մելքիսէթին։ Սա հս ոչինչ չկարողացաւ անել, հրաւիրուեց հարստութեամբ և բարի վարքով համբաւաւոր Սրապիոն վարդապետը, որ կաթուղիկոսական օծումն ընդունեց Գրիգոր ԺԳ. անուամբ։ Սրապիոն-Գրիգոր ԺԳ. մեծ նեղութիւններ կրելուց յետոյ շուտով վախճանուեց Տիգրանակերտում 1606 թ.։

Մելքիսէթը իւր եղբօրորդի Սահակին կաթուղիկոս օծեց, հարկապահանջների ու պարտասէրների առաջ պատասխանառու կարգելուց յետոյ, գնաց Կ. Պոլիս և Լեհաստան՝ ժողովարարութեան և Լեհաստանում ժողովրդից թաքուն Նիկոլ Թորոսովիչ արեղային ե-

պիտկոպս ձեռնազըրեց։ Նիկոլ Թուրոսովիչը լատին կրօնաւորների ձեռքին գործիք գարձաւ։ Նա միանգամայն հակառակ ուղղութիւն բռնեց թէ Եջմիածնի վերաբերութեամբ՝ արհամարհելով հայրապետութիւնագլարաբութիւնները և անարդեխով հայրապետուկան նուիրակներին և թէ ժաղովրդի վերաբերութեամբ՝ բռնանալով նըանց վերայ, և մեղանչելով եկեղեցու աւանդութիւնների և կարգերի դէմու Լատին կրօնաւորներն իրանց պաշտպանութեան տակ առան Նիկոլին, որ ընդունելով պապի գերիշանութիւնը՝ սկսեց աւելի ես նեղել ժաղովրդին։ յուսահատ ժողովուրդն էլ պապական եղաւ, պապի միջոցով Նիկոլից աղատուելու համար։ Լատին կրօնաւորները հասան իրանց նպատակին տիրելով հայ եկեղեցիններին։ Լեհաստանի հայերի վիճակը թիթեացնելու և նրանց գործերին վերահասութիւն անելու համար՝ Եջմիածնի հայրապետունոցի կողմից այնուեղ ուղարկուեցին ժամանակի ամենանշանաւոր հոգևորականները՝ Գրիգոր և Խաչատուր Կիսարացինները։ սակայն սրանք եկեղեցական սաստիկ նախանձախնդրութիւն ցոյց տալ կամենալով՝ աւելի ես բորբաքեցին խռովութիւնը ժողովրդի և Նիկոլի միջև («Առաքել պատմապիր»)։ «Նիկոլ եպիսկոպոս Քարբիէլ արքեալու Այլապետնի և «Յունի միութիւն» Կ. Նզեանց)։

3. Աղուանից կաթուղիկոսութիւնը, ըստ ազգային պատմաց, սկսուեց 340 թ. և առաջին կաթուղիկոսն էր ս. Լուսաւորչի թոռն Գրիգորիս։ Աղուանից կաթուղիկոսութեան յաջորդութիւնը շարունակուեց Փոքր-Սիւնիկում կամ Արցախում։ Ի պատիւ ս. Գրիգորիսի նշխարաց՝ որ թաղուած է Ամարասում, այդտեղը համարում է աթոռ Աղուանից կաթուղիկոսութեան, բայց կաթուղիկոսները կենում էին Պարտաւում, յետոյ Գանձասարում ելն։ Աղուանից կաթուղիկոսների իշխանութեան և նվարկուեցին մի ժամանակ և Դուգարք կոմ այժմ մեան Պաղախ, Բօրչալսւն, բայց սխալ է այդ գաւառը, ինչպէս և Արցախը կոչել Աղուանք։ Աղուանից աշխարհն ընդգրկում էր այժմեան Բաքուի նահանգի մի մասը։ Խորենացուն վերագրուած աշխարհագրութեան մէջ (Հրատ. Գ. Պատկաննեանի, Ս. Պ. Բ. 1877) ասուած է. «Աղուանիս, այսինքն է Աղուանք, յելից կալով Վրաց առ երի Սարմատիոյ առ Կաւկասաւ մինչև ցկասքից ծովն և ցՀայոց սահմանս առ Կուր գետով» (եր. 17), Խորենացին (Գիրք Գ. դլ. Գ.) ս. Գրիգորիսի նահատակութիւնը գնելով Վատանեան զաշտում «ՃիրՃ ի Կասրիականն կոչեցիալ ծով», աւելացնում է. «զոր (զմարմինն), քարձեալ սարկաւագոց նորուն, բերելով ի Փոքր-Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանից»։ Ուրեմն Փոքր-Սիւնիք, որով և Ամարասը, Աղուանքից դուրս էր։

Մենք հարկ համարեցինք այս կէտի վերայ կանգնել, որովհետեւ Գիր. Տ. Մակար եպիսկոպոս Բարխուդարեան, իւր բոլոր տեղագրական երկասիրութիւնների մէջ Աղուանից աշխարհի սահման-

Ները շատ է ընդարձակում, հասցնելով մինչև Չորոյ գետ և Սևանայ լճի հիւսիսային ու արևելեան ափերը, շփոթելով Աղուանից անունը կրող կաթուղիկոսների իշխանութեան սահմանը Աղուանից երլլի սահմանի հետ:

Աղուանից կաթուղիկոսութիւնը միշտ եղել է ամենայն Հայոց հայրապետութեան գերիշխանութեան տակ. ժամանակաւոր ընդպղումները շատ կարճատեև են եղել Աղուանից կաթուղիկոսութիւնը վերջացաւ իսկապէս 1786 թուին, և վերջին կաթուղիկոսն էր Յավհաննէս Զալարիեան: Խորայէլլ իրք հակաֆռու և Յովհաննէսի եղբայր Սարգիսը թէի կաթուղիկոսական օծումն ստացան, բայց վերջինս 1798 թ.՝ Վրաց Գէորգ թագաւորի հանութեամբ և ամենայն Հայոց Դուկաս կաթուղիոսի հրամանով նշանակուեց Հաղբատի վանահայր արքեպիսկոպոս տիտղոսով: Երբ ոռուները տիրեցին Ղարաբաղին, Սարգիսը վերադարձաւ Գանձասար և 1815 թուին Եփրեմ կթղ. յատկացրեց նրան միտրոպօլիտ տիտղոսը: Սարգիսն յաջորդեց նրա եղբօրուրդի Բաղդասար արքեպիսկոպոսը, դարձեալ միտրոպօլիտ տիտղոսով: Աղուանից կաթուղիկոսական տահմի այս վերջին բարձրաստիճան հոգևորականը վախճանուեց 1854 թուին յունիսի 27-ին: 1836 թուից պօլուժենիէի հաստատութեամբ Աղուանից անունը կրող կաթուղիկոսութեան վիճակը դարձաւ Ռուսաստանի հայերի վեց թեմերից մէկը Ղարաբաղու թեմ կոչմամբ:

Աղթամարայ կաթուղիկոսութիւնը սկսուեց ԺՅ. դարի համարեամսկղբում: Երբ Գրիգոր Գ. քանիամեայ հստակում կաթուղիկոս ընտրուեց, Աղթամարի Գաւիթ արքեպիսկոպոսը իւր կուսակիցների ձեռքով Վասպուրականի Չորոյ վանքում օծուեց և փոխադրուեց Աղթամարի Գրիգոր Գ. 1114 թ. Սեաւ լեռան Բ. ժողովով նզովեց և հակաթոռ, հրատարակեց Աղթամարայ կաթուղիկոսութիւնը. բայց ցարդ շարունակում է: Այս երկու—Աղուանից և Աղթամարայ—կաթուղիկոսական աթոռներն էլ, որ ո. Էջմիածնի թշուառութեան օրերին վտարանջել էին, երբ Մովսէս և Փիլիպպոս կաթուղիկոսների օրով սկսեց Էջմիածինը բարեկարգուել ու պայծառանալ՝ կամովին հպատակուեցին, ընդունելով ո. Էջմիածնի ամենայն Հայոց հայրապետական Աթոռի գերիշխանութիւնը:

Յ. Ա.

